

ցեղակից լեզու մըն էր. այս բանին ալ ապացոյց են խումբ մը հայ բառեր՝ որոնք թուրք լեզուով կը մեկնուէին. այսպէս հազիւ=թրք. az, լաս=թրք. sal, կոյս=թրք. qəz, ուղի=թրք. yol, բոժիւն «արջու ձագ»=թրք. tosun «հորթ», արուգ=arəq «նիհար, չոր» են: Երբ հայերը եկան իրենց ներկայ հայրենիքը՝ դրացի դաժնուելով զանգիւղի, պարսիկ, յոյն, հռոմայեցի են ազդեցուն, ասոնցմէ ազդուելի սկսան և նախնի թուրքերէն բառերը սկսան տեղի տալ նորամուտ ձեւերու: Թարգմանչաց ժամանակ՝ այն է ե. դարու առաջին կէսին, մեր երանաշնորհ նախնիքը ժողովք մը կազմելով՝ որոշեցին լեզուին վերջնական կանոնաւոր լեզւաբանք մը տալ. այս նպատակով քանի մը հոգի ուղարկեցին Պարսկաստան, քանի մը հոգի Աթէնք, Բիւզանդիոն, և ուրիշներ ալ Հռոմ: Հոն այս աշակերտները լաւ ընտելանալով տեղական լեզուին, դարձան եկան Հայաստան: Նոր ժողովք մը կազմուեցաւ. այդ ժողովին մէջ իւրաքանչիւրը թափեց իւր ուսած ու լսած դադանիքները, և վերը պարզուած զանազան եղանակներով կազմուեցաւ հայերէն լեզուն: Սկսան այդ նորակերտ լեզուով թարգմանել Ս. Գիրքը, որ և դարձաւ կեդրոն և տիպար ամբողջ հայերէն լեզուի. իւրաքանչիւր անձ սովորեցաւ այդ լեզուն, և կամաց կամաց դպրոցներու միջոցով ասորածուելով՝ դարձաւ ընդհանուր հասարակաց բարբառ:

Հրաչեայ Աճառեան



ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԲՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԷՍ ՄԻԶՈՑ
ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ՖԻԶԻԳԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ.

Պատմ. Տեսութիւն Օ. Վ. Կրիժանովսկու.

Պուցէ շատերին տարօրինակ թուի, եթէ ասեմք, որ մարդն, ամբողջ աշխարհում, ոչ ոքի, նոյն իսկ չորքօտանիներին՝ այնպէս անիրաւացի, այնպէս տմարդի կերպով չէ վերաբերուում, որպէս զէպի իւր անձը: Եւ սակայն այդ այդպէս է: Մարդը կենդանիներին վերաբերուում է, գոնէ, որպէս հոգատար տէր, թէկուզ հէնց մի հասարակ ցանկութիւն միայն ի նկատի առնելով՝ ըստ կարելւոյն շատ օգտուել նոցանից, և այդ տէրն աշխատում է,

որ իւր տաւարը կատարելապէս առողջ լինի՝ ուժեղ և ընդունակ ամենաներկարատեւ և դժուարատար աշխատանքի։ Այդ վերաբերմունքը չեմ կարող ասել թէ ունի և դէպի իւր անձը։ Այստեղ անտես է արւում կաղմուածքի առողջ դրութիւնը, ֆիզիքական ուժերի ամրութիւնը և արհամարհում է վրդովեցնելու չափ, և մարդը ոչ մի բանի այնպէս անտարբեր, ուղղակի՝ անիրաւացի կերպով չէ վերաբերւում, որպէս դէպի իւր սեպհական մարմինը։ Մատաղ սերունդը կրթելու այժմուայ եղանակն այն է, որ աշխատում են զարգացնել միտքը և, դուցէ, մասամբ էլ սիրտն աղնուացնել, իսկ ինչ վերաբերում է մարմնին, միանգամայն մոռացութեան է տրուած, կարծես թէ՝ ոչ մի էական նշանակութիւն չունի այն, կարծես թէ՝ առանց նորան էլ կարելի է ամենայն յաջողութեամբ եօլա գնալ։ Մարդկային էութեան մի ամբողջ կէտն այդպէս անիրաւացի կերպով արհամարհելու, անտես անելու հետեւանքները, ճշմարիտ որ, զարհուրելի են իսկապէս։ Աւճակադրական տեղեկութիւնները մեզ ցոյց են տալիս որ ջղային հիւանդութեանց թիւն աստիճանաբար աճում է, և այդ սպառնում է հասնել զարհուրելի չափերի, դորան դուրնթացաբար աճում է և սակաւարիւն, թոյլ կուրծք ու թոքախտ ունեցողների թիւը։ Արդի կրթական ուղղութեան կործանաբեր ազդեցութիւնն աւելի շատ երեւում է ուսանող մատաղ սերնդի վերայ։ Ռուսաստանի մի քանի տեղերում, մի տարուայ ընթացքում մէն մի ուսանողին՝ միջին թուով՝ ընկնում է հիւանդանալու մի դէպքից աւելի։ Համաձայն բժիշկների ցուցման, ուսանողների ահադին մեծամասնութեան մէջ տարածուած է առհասարակ արեան պակասութիւն, վատարիւնութիւն, կարճատեսութիւն և այլ նման հիւանդութիւններ, և այդ՝ աղջկերանց մէջ աւելի՝ քան տղայոց մէջ։ Զի վերջիններս կրթական ուղղութեան թերութիւնները մի որոշ չափով լրացնում են այն ազատ շարժողութիւններով ու խաղերով, որոնցից օգտուելն արգելուած չէ նոցա։ Այն ինչ աղջկերանց համար, ով դիտէ թէ ինչո՞ւ, այդպիսի խաղերն ու շարժմունքները միանգամայն անպատշաճ և անվայել են համարում։ Թէ ուր է հասնում արդի մանկավարժական դործնականութիւնը սոյն կէտի վերաբերմամբ, անգամ ծիծաղելի է ասել։—աղջկերանց վերայ նալում են որպէս մի ինչ որ առանձին տեսակի էակների վերայ, որոնք բոլորովին նման չեն տղայոց, և նոցա կրթելու ուղղութիւնը ձգտում է որքան կարելի է շատ ոահմանափակել նոցա կատարած շարժողութեանց թիւը և առհասարակ խեղդել նոցա մանկական աշխոյժ բնաւորութեան ամեն արտայայտութիւն։ Պարզ է որ այդ օրինակ կրթութիւն (աղջկերանց և աղայոց) թոյլ և հիւան-

գոտ մարմնի մէջ ոգեկան կեանքն էլ չէ կարող առաջ գնալ քնական ուղղութեամբ. միայն in corpore sano—mens sana (առողջ մարմնի մէջ կայ առողջ միտք) ասում էին հները: Եւ ահա այդ ուղղութեան հետեանքը լինում է այն, որ այլասեռւում է մարդկութիւնը և որպիսի երևոյթն արդէն նկատւում է մի քանի ազգերի մէջ: Այդ այլասեռման նշաններն են—յայտնի տաղանդների բացակայութիւնը, հասարակութեան բարոյական մակերեւոյթի իջնելը և, վերջապէս, ծնունդների թուի պակասելը *): Ի խոյս այդ չարագուշակ երևոյթների մարդկութիւնը պարտաւոր է, վերջապէս, հասկանալ որ բացի հոգեկան բարոյականութիւնը, կայ եւ ֆիզիքական բարոյականութիւն. եւ՝ մարմնի դեմ գործած յանցանքը նոյնպիսի մեղք է, որպէս եւ հոգոյ դեմ գործածը: Այս ճշմարտութիւնն, իրաւ է, արդէն շատ վաղուց է յայտնի և ընդհանրացած, սակայն արդի մարդկութիւնը մոռացել է այն. այդ ճշմարտութիւնը մինչև անգամ տարօրինակ է թւում նորան: Եւ ուրեմն, ստիպուած, պէտք է յետ գնանք անցեալ դարերի խորքերը, և այնտեղ որոնենք բացատրութիւններն այն հարցերի, որոնց լուծելու հիմունքներն արդի մարդկութիւնը կորցրել է, մոռացութեան տուել: Սոյն տեսութեան նպատակն էլ հենց այդ է, և ցոյց տալ կամի այն միջոցները, որոնց շնորհիւ մարդկութիւնը հին դարերում հասել էր իւր հոգեկան-ֆիզիքական ուժերի այն բարձր ներդաշնակութեանն ու զարգացմանը, որի առաջ մենք հիմայ էլ չենք կարող չխոնարհիլ և չպատկառիլ: Այդ միջոցներն էին—մանկական խաղերի և մարմնամարզական վարժութիւնների օգնութեամբ հարկաւոր զարգացումն տալ կազմուածքին:

Թէ՛ ո՛ր աստիճանի բարձր էր գնահատւում հնումը ֆիզիքական զարգացումը, դորան ամենալաւ վկայ կարող է լինել այն, որ Սպարտայում, օրինակ, թոյլ և ցաւադար երեխաներին, որ յոյս չկար թէ կմեծանան և դիմացկուն մարդիկ կդառնան, ուղղակի՝ ապրելու անարժան էին համարում և տաանց խղճահարուելու չպրտում Տայգետայի մօտ եղած անդունդը:

Պաւզանիսը պատմում է հետեւեալ դէպքը, որ ընդունում է հների վերոյիշեալ հայեացքը.—Կլէօնցի մի յոյն, Տիմանթէս անունով, յայտնի էր իւր մեծ ուժով և լաւ ըմբիշ էր: Ոլիմպիական խաղերում նա միանգամ պրակի էլ արժանացաւ: Եւ երբ ծերութեան օրերում այլ ևս անկարող եղաւ մասնակցել հրապարակական մրցութիւններին, էլի չզաղարեց իւր ուժերը փորձե-

*) Ֆրանսիացոց մէջ այդ վերջինը անհետի է խիստ մեծ լալիով. ի. Թ.

լուց և ամենայն օր լարում էր իւր մեծ աղեղը: Եղաւ որ նա երկարատե ճանապարհորդութեան գնաց: Երբ վերադարձաւ, առաջին գործն եղաւ աղեղը ձեռք առնելն: Երկար ժամանակ անգործ մնացած բազուկներն անկարող եղան այլևս ձդել լարը: Եւ այդ բանն այնպէ՛ս աղդեց նորա վերայ, որ իսկոյն խառոյկ կազմեց և վերան բարձրացաւ և իւր ձեռքով վառելով՝ այրուեցաւ: Պղատօնը կաղ էր անուանում նոցա, որոնց հոգին ու մարմինը հաւասարաչափ զարգացած չէին: Նա ինքը շատ էր հոգս տանում զարգացնելու իւր ֆիզիքական ուժերը, և որպէս Պիւթագորասն էր, նա էլ մասնակցում էր մինչև անդամ հրապարակական մրցութիւններին: Հնորհիւ այդ բանի, նա, իւր ուսուցիչ Սոկրատէսի նման, որպէս և Սոֆոկլէտի, պահպանեց մաքի իսկ—երիսասարդական թարմութիւնը մինչև խորին ծերութեան օրերը: Հին-Յունաստանի այլ նշանաւոր մարդկանցից, որոնք արթուն հոգոյ հետ ունէին և ուժեղ մարմին, յայտնի էին Քրիստիպը, Դեմոնակտը, Լիկոնը, Էվրիպիդէսը և Պիւթագորասը: Վերջինս Ոլիմպիական խաղերին պսակ էլ ստացաւ:

Հնորհիւ այդպիսի հայեացքների, մանկական խաղերի վերայ ևս բոլորովին այլ կերպ էին նայում, քան այժմս: Թէ որքան բարձր էր նոցա այդ հայեացքը, կարելի է եզրակացնել, օրինակ, այն բանից, որ՝ Հին-Յունաստանում մանկական խաղերին մասնակցում էին և՛ հասակաւորները, և՛ մինչև անդամ ծերերը, և այդ ամենէին ամօթ չէր: Պլուտարքոսը պատմում է Սպարտացոց Ագեղիլայոս թագաւորի մասին թէ՛ նա ձեռնափայտը հեծած՝ իւր որդու հետ ձիաւորի էր խաղում և շատ անդամ էին տեսել նորան այդպէս խաղալիս կայտառ երեխաների հետ: Նոյնն ամենում էր և յունաց յայտնի փիլիսոփայ Սոկրատէսը, որպէս և այլք: Հերակլիտի մասին, օրինակ, պատմում են, որ նա Եփեսոսում Դիանայի տաճարի մօտ, ինքն էր խաղեր ստորում երեխաների համար: Հետաքրքիր մի փաստ են հաղորդում և մի այլ փիլիսոփայի — Անակսագորասի մասին: Սա, որ իւր ամբողջ կեանքում միշտ հրաժարուել էր ամեն մի պատուից—մեծարանքներից, իւր կտակի մէջ խնդրում էր որ իւր մեռած օրը խաղեր սարքեն երեխաների համար, որով մեծապէս յարգած կլինեն իրեն: Հնումը մանկական խաղեր հնարելու և կատարելագործելու վերայ աշխատել են նշանաւոր փիլիսոփաներ, Այսպէս, օրինակ, ամենքին յայտնի погрёмушка *) խաղալիքը Արքիտաս փի-

*) Զանազան մեկերով շինած խաղալիք, որ զարդարուած է քոժոժներով:

լիսովայի հնարածն է: Պղատոնը մանկական խաղերն անուանում էր աստուածների ուրախութիւն, և, Արիստոտելն էլ նորա հետ, խորհուրդ էր տալիս անշուշտ զբաղեցնել երեխաներին:

Առհասարակ, զանազան ազգերի մանկական խաղալիքների և խաղերի մէջ կայ խիստ զարմանալի նմանութիւն: Մեր ամենից շատ ընդհանրացած խաղերը—վէզ ու գնդակ խաղալը—ամեն ազգերի մէջ կայ առանց բացառութեան և անյիշատակ ժամանակներից մնացած: Քաղաքակրթութեամբ ամենահին երկրում—Եգիպտոսում կրօնէտ և շրջանակ (օծրպէ) խաղերի հետ միաժամանակ կար և գնդակ ու վէզ խաղալը, ամենայնիւ նման հիմակուայ խաղին: այն ինչ, որպէս ցոյց են տալիս գիտնականների հետազօտութիւնները, այդ խաղերը բերուած են Եգիպտոս արեւմտեան Ասիայից, որտեղ ներքովդի բաբելոնեան պալատը պեղելիս գտնուած են բրօնզէ վէզեր, որոնց երկու երեսում կային ոսկեայ ձուլածոյ կոկոռներ (նունուֆար ծաղիկ): Բացի յիշեալները, Եգիպտոսում գործադրում էին և այլ խաղալիքներ.—այսպէս, օրինակ, պեղումներ անելիս երեխաների մումիաների հետ միատեղ գտնում են յաճախ ամենատեսակ խրճիկներ (տիկնիկ, խամաճուկ)՝ երբեմն շարժական անդամներով, փայտից շինած զանազան կենդանիների, կոներ (кегля), պտուտակի քարէ կամ փայտէ գնդակներ և այլն: Առհասարակ Եգիպտոսում գործադրում էին ամեն տեսակ խաղալիքներ, որոնք յարմարեցրած էին մանկական խաղերի համար որպէս տանը, նոյնպէս և, գլխաւորապէս, բացօդեայ տեղերում խաղալու: Թէ որ աստիճանի բարձր նշանակութիւն էին տալիս Եգիպտացիք այդ խաղերին, կարելի է եզրակացնել նորանից, որ, ինչպէս հաղորդում է Պլուտարքոսը, երեխաներին թոյլ էին տալիս խաղալու մինչև անգամ տաճարների դաւթում: Ինչ վերաբերում է յատկապէս մարմնամարզական խաղերին—վարժութիւններին, Եգիպտոսում դոցա գոյութեան մասին ոչինչ չգիտենք: Այդ մասին աւելի շատ տեղեկութիւններ կան Ասիայի հին ժողովուրդների, իսկ դոցա մէջ գլխաւորապէս պարսիկների վերաբերմամբ: Վերջիններիս մէջ կրթական գործի կէտնպատակին էր լաւ քաղաքացիներ պատրասել. և այդ բանին հասնելու միջոցներից մէկն էլ համարւում էր Ֆիզիքական մարզանքները, որոնց օգնութեամբ կարելի է հասնել մարմնական ուժերի աւելի մեծ չափերի, որպէս և հոգեկան արթնութեան և համբերութեան: Հերոդոտն ասում է թէ՛ պարսիկ երեխաները սովորում էին երեք գլխաւոր արուեստ. ձիավարել, նետ-աղեղ գործադրել և ճշմարիտ խօսել: Որպէս տեսնում ենք հոգեկան—բարոյական կրթութեան հետ զոյգ ընթանում էր և Ֆիզիքական կրթութիւնը: Պարսիկ երեխաները 7

տարեկան հասակիցն սկսած՝ ընդունուած էին հասարակական հիմնարկութիւնները, ուր և սովորուած էին վազել, նշան խփել, տէգ արծակել, ձի հեծնել և այլն. բայց ծնողները պարտաւոր էին ամենայն աշալիքութեամբ հսկել որդոց կրթութեան գործին։ Մինչև 15 տարեկան լինելը, երեխայի բնութեան մէջ երևացող որ և է չարիք վերադրուած էին ծնողներին և նոքա էին պատասխանատու։ 15 տարեկանից վեր՝ պատանիներն զբաղուած էին զինուորական վարժութիւններով և որսորդութեամբ, ու սովորուած էին տանել ամեն տեսակ զրկանք և օգի խտութիւն. քաղցն ու ծարաւը, ցուրտն ու տօթը միակերպ պէտք է տանէին նոքա։ Առհասարակ՝ պարսիկների իդէալն էր՝ կատարեալ առողջութիւն և զիմացկուն կազմուածք, որն այդ դէպքում պէտք է ունենար և ըստ ամենայնի վայելչակազմ տեսք։ Այդպիսի վայելչակազմութիւնից որ և է խոտորումն համարուած էր խայտառակութիւն. օր. հաստաւիւր մարդիկ ատելի էին ամենքից այն աստիճան, որ այդպիսիներն ամօթու չէին համարձակուած հասարակութեան մէջ մտնել, որովհետև զիրութիւնը համարուած էր ծուլութեան, անգործութեան և անչափաւորութեան նշան։ Ասիայի միւս ժողովուրդներից այդ մասին աւելի յայտնի են Փոքր-Ասիացիք, որոնց զանազան մարմնամարզական խաղերն անցել են և Յունաստան։ Քսենոֆոնեան Թրակէացիները և Միդիացիները մասին մի քանի տեղեկութիւններ է հաղորդում՝ որպէս ակնանատես։ Իսկ ինչ վերաբերում է Միդիացւոց, նոքա մէջ եղած խաղերի ծագման մասին Հերոդոտը պատմում է հետևեալը։ — Միանգամ Ատիս թագաւորի օրօք՝ Լիդիայում եղաւ երկարատև սով։ Այդ ժամանակ, որպէս զի ուտելեղէնի պաշարը բաւականանայ, նոքա սկսեցին կերակուր ընդունել օր ու մէջ. իսկ քաղցի զգացմունքը խեղդելու համար՝ ծոմ օրերին զբաղուած էին զանազան խաղերով։ — Այս կերպ ապրեցին նոքա 18 տարի։ Բայց որովհետև սովն աւելի և աւելի էր սաստկանում, ուստի թագաւորը լիճակ դցեց և ժողովրդի կէս մասը իւր երկրի սահմանից դուրս ուղարկեց։ Հէնց այդ ժամանակ էր, որ հնարեցին խորանարդ, լիէգ, գնդակ և այլն խաղալը։ Տրօյեան պատերազմի ժամանակ, որպէս երևում է Եղիականից, Փոքր Ասիայի երիտասարդութեան մէջ ամենատարածուածն ու ամենասիրելին էր լիէգ խաղալը։ Երկսեռ հառարակութեան՝ թէ երեխաները և թէ հասակաւորների մէջ մեծ գործադրութիւն ունէր և զանազան գոյնի կտորներից կարած գնդակով խաղալը։ Խաղում էին այսպէս. — մէկը ձգում էր գնդակը բարձր, իսկ միւսները բռնում էին, և վարպետ խաղացողը նա էր, ով կրճէր գնդակը բարձր ցատկելով։

Բայց ոչ մի տեղ խաղերն այն զարգացման չեն հասել, որպէս Հին-Յունաստանում: Բանաստեղծ -- փիլիսոփայի պայծառ աչքով նայելով աշխարհի վերայ՝ որպէս մի իր՝ ամենայնիւ նպատակաւորմար և ներգաշնակի, յոյն մարդը որոնում էր նոյն ներգաշնակութիւնը և իւր անձի, իւր սեպհակոն բնաւորութեան մէջ: Ըստ հասկացողութեան յոյն մարդու՝ արտաքին ու ներքին աշխարհները մէկ թէ երկու ուրոյն-ուրոյն և հակադիր աշխարհներ են, այլ միևնոյն: Բայց զանազան կողմով հասկացուած աշխարհը, առաջինը -- արտաքին աշխարհը, մի պատկերացումն է միայն: մի մարմնացումն իդէաների աշխարհի: Համաձայն դորա՝ յոյնը իւր մարմնի վերայ էլ նայում էր, որպէս պատկերացումն իւր հոգոյ և դորա համար էլ միակերպ հոգս էր տանում և՛ հոգոյ և՛ մարմնի վերայ: Ի հետեանս ֆիզիքական կազմուածքի վերայ ունեցած այդ հայեացքի, յոյների կողմից մի առանձին սիրոյ և յարգանքի էր արժանանում այն ամենը, ինչ որ նպաստում էր մարմնի զարգանալուն և զօրանալուն, և մանկական ու մարմնամարզական խաղերն այդ առմամբ ըսնում էին առաջին տեղը: Սակայն այդ բանի վերաբերմամբ Աթենացոց և Սպարտացոց հայեացքները փոքր ինչ տարբեր էին: Մինչ առաջիկներն -- Աթենացիք, զարգացնելով կազմուածքը՝ ի նկատի ունէին հասնել ներգաշնակութեան և դեղեցկութեան իդէալին, վերջիները հետամուտ էին միայն զուտ գործնական նպատակին հասնելու -- առողջութիւն և կազմուածքի դիմացկունութիւն: Դորանից էլ՝ նոցա մէջ կրթութեան եղանակը տարբեր էր: Հազիւ թէ սպարտացի երեխաները կմեծանային այնքան, որ կարող էին առանց մօր կառավարուել: Նոքա սրբէն համարւում էին պետութեան սեպհականութիւն, և հէնց այդ ժամանակուանից սկսած՝ նոքա պէտք է անցնէին կրթութեան ամենախիստ դպրոցը: Նոցա հագցնում էին ողբան կարելի է հառարակ, շրջում էին նոքա գլխաբաց և մինչև անգամ ձմեռն էլ իրաւունք չունէին օտնաման հագնել: 10 տարեկան հասակից՝ նոցա վերայից հանում էին խիսօնը (պատմութեան), և այդ օրուանից՝ նոցա միակ հագուստն էր քիկնոցը՝ որը և պէտք է գործադրէին մի ամբողջ տարի: Մաստիգօֆորները խստութեամբ պատժում էին նոցա ամեն մի չարութեան համար. ծեծում էին նոցա կրնկով, փոկով կամ ճիպոտով. իոկ Արտեմիդէս Օրֆէացու սօնին՝ աստուածուհու սեղանի առաջ, ամենայն տարի ենթարկում էին խիստ դանակոծութեան ամենքին էլ, առանց բացառութեան, և այդ դանակոծութեան ներքոյ ձայն հանելն այն աստիճան ամօթ էր, որ դանակոծուողները օմանք լաւ էին համարում մեռնել հարուածների տակ:

քան մի հառաչ, մի ծպտուէն տնդամ հանել: Սահայն Սպարտա-
յումն էլ, քանի որ պետութիւնը չեր վեշցրել երեխաներին,
նոքա ապատ կերպով կարող էին զուարճանալ ամեն տեսակ խա-
ղերով ու զուարճութիւններով: Իսկ ինչ վերաբերում է Ատտի-
կային, այնտեղ անհամեմատ մեղմ էին վերաբերում գէպի երե-
խաները. ամեն մի խիստ միջոց դուրս էր դրած գործադրութիւ-
նից և խաղերն ամենական երեխաների մշտական դրօսանքն էին:
Խաղալիքներ ունենալը պարտադիր էր ամեն ընտանիքի համար
և, բացի այդ, կային խանութներ, ուր բացառապէս վաճառում
էին միմիայն ամեն տեսակ խաղալիքներ: Մատուղ հասակում
երեխաներն զբաղւում էին սովորաբար այնպիսի խաղերով, որոնք
չէին պահանջում որևէ առանձին յարմարութիւններ կամ որոշ
առարկաներ: Այդ խաղերն էին, օրինակ, բզէզի ոտին թել կա-
պել և թելի ծայրը բռնած բաց թողնել օդի մէջ (այս խաղը
չատ էին սիրում ամենացի երեխաները), աչքախփուկ խաղալ և
այլն: Խաղալիքներից այդ հասակում գործադրւում էին՝ թրխկան
(хлопушка), կաշուից շինած տնակներ և մակոյկներ, փայտից
շինած կենդանիներ—կրիայ, նապաստակ, բադ, կապիկ իւր ձա-
գերով և այլ նման բաներ. գործադրւում էին նոյնպէս դիպսից,
մոմից շինած, կամ կաւից թրծած զինուորներ: Աւելի հասակա-
ւոր երեխաները խաղում էին գնտակ, շրջանակ, պտուտակ, հոլ,
ճլորդի, թագաւոր, զոյգ-կէնտ, լախտի, փող (орлянка, орелъ и
рѣчь,—հէնց այնպէս, որպէս այժմ են խաղում), աչքախփուկ,
չաղչաղ (горблоскѣ), բուն (ջուլա,—աշխատում էին հեռուից
փոսը գցել բռնում եղած կաղինները կամ այլ իր), գուշակում
էին թէ դիմացինը բռնում քանի ընկուղ կամ կաղին կայ և այլն.
բայց ամենից սիրելին էր հինգ քարով խաղալը, որ շատ նման է
մեր դա՛րդա՛ջիւմա՛ կոչուած խաղին (ո՛չ շնիկ) և խաղում էին
այսպէս.—քարերը շարում էին ձեռքի երեսին և վերև դրսւմ ու
բռնել աշխատում: Բոլոր այդ խաղերին միակերպ մասնակցում
էին թէ՛ տղայք և թէ՛ աղջկերք, իսկ յատկապէս աղջկեր սնց
պատշաճեալ խաղալիքներն էին դիպսից, կաւից կամ մոմից շի-
նած խրճիկներ: Փայտէ ձի, տայլակ և այլ նման խաղալիքներով
զուարճանում էին գլխաւորապէս տղայքը: Ինչ վերաբերում է
այն խաղերին, որոնք գործադրւում էին հասակաւորները և որոնց
համար աւելի պահանջում էր սովորական ճարպիկութիւն, քան
թէ մկանների լարումն, դոցանից ամենայայտնիներն երեք են.—
մէկն այն, որ խաղացողն աշխատում էր որոշ հեռաւորութիւնից
ցայտեցնել հեղուկը մի ամանից միւսը (այդ խաղով սիրոյ մասին
գուշակութիւններ էին անում): Երկրորդը՝ որ խաղացողից պա-

հանջւում էր մատներով միանգամից բռնել երեսների վերայ (на
 peбpѣ) արագ պատող դրամը. երրորդ խաղը, որ այժմ էլ պա-
 տահում է, այն էր, որ մի առանձին կերպ ծալած կաշուէ երկզի
 ծալքերի արանքը խրում էին բարակ չուիեր: Վերջապէս՝ դըն-
 տակը, վէզը (ոչխարի), թագաւոր, հանելուկներ և բառախաղը
 միակերպ գործադրութիւն ունէին որպէս երեսանների նոյնպէս և
 հասակաւորների մէջ.—իսկ գնտակն ունէր աւելի ընդարձակ գոր-
 ծադրութիւն—երկու սեռի մէջ էլ՝ թէ՛ երեսանների և թէ՛ հասա-
 կաւորների վերաբերմամբ: Առհասարակ յոյները շատ էին սիրում
 գնտակ խաղալը: Գնտակները սովորաբար լինում էին փոքր, կա-
 բուած դանազան գոյնի կաշուից, և լցուած էին բրդով, բմբուլով
 կամ թուղի սերմով. բայց լինում էին և դատարկ ու մեծ գնտակ-
 ներ: Գնտակախաղի աւելի գործածական տեսակներն էին հետե-
 ւեալները.—*οὐρανία*—դէպի վեր գցելը, *ἀπορράξεις*—յես *σαι* և *φενίνδα*
 —ուղղում եմ դէպի մի կողմ, բայց գցում մի այլ կողմ. այդ բոլոր
 խաղերին կարող էին մասնակցել սկսած մէկից՝ քանի հոգի էլ որ
 ցանկանային: Սպարտացոց սիրելի խաղն էր *ἐφρηβία*; խաղացող-
 ները բաժանւում էին երկու խմբի, որոնց արանքը մանր քարե-
 քից շարած մի դիժ էին անցկացնում. այդպիսի գծեր անց էին
 կացնում և ամեն մի խմբի յետևի կողմից. և այդ գծերից չպէտք
 է դուրս գալին խաղացողները: Գնտակը դնում էին մէջտեղի
 գծի վերայ և երկու կողմից էլ յարձակուելով՝ աշխատում էին
 դուրեւ այն դէպի հակառակորդների կողմը, և այնպէս, որ թռչէր,
 անցնէր յետևի դիժն էլ: Եւ այն խումբը, որին պատկանում էր
 յետևի դիժը, համարւում էր տարուած: Այդ խաղերից *οὐρανία*,
 և՛ սորան նման *ἀρπαστόν*-ն, գերադասում էին գլխաւորապէս
 կանայքն ու աղջկերքը, իսկ *φενίνδα* և *ἐφρηβία*—գլխաւորապէս երի-
 տասարդներն ու հասակաւոր տղամարդիկ: Խաղերն առհասարակ
 Յունաստանում համախմբում էին ժողովուրդը. խաղերի ժամա-
 նակ գալիս ժողովւում էին ու մասնակցում՝ և՛ հարուստները և՛
 աղքատները, և՛ ծերերը և՛ երեսանները. ինչքան էլ հասարակ և
 մանկական լինէին այդ խաղերը, առանց ամաչելու մասնակցում
 էին և հասակաւորները, եթէ միայն այդ խաղը դոնէ փոքր ի շատէ
 նպաստում էր կազմուածքի մէջ արագաշարժութիւն և ուժ դար-
 գացնելու նպատակին: Յոյների այդպիսի, բայց աւելի մեծ և
 օղտակար համախմբմանը նպաստում էին գլխաւորապէս ու պա-
 լեստաները*)—շինութիւնների, որ յատկապէս մարմնամարզա-

*) Հին-Յունաստանում ևւ Հռովմում մարմնամարզական դպրոցներ
 փոքրահասակների համար: Ծ. Թ.

կան խաղերի համար էին նշանակուած: Սկզբում այդպիսի խաղերի համար նշանակում էին որևէ հրապարակ՝ ցանկապատած հասարակ կերպով. բայց պարսկական պատերազմների ժամանակից սկսած (Ն. դ. Բ. առաջ.) այդ պարապմունքների համար սկսեցին կառուցանել առանձին շինութիւններ. և հէնց այդ շինութիւնների վերայ էր, որ վերջերն սկսեցին առաջին անգամ փորձել Հելլադայի ճարտարապետական արուեստը, և շնորհիւ այդ բանի՝ Յունաստանի դիմնադիւանները դարձան Ատտիկայի ճարտարապետական արուեստի ամենալաւ նմուշները: Թէ ժողովուրդն ինչ նշանակութիւն էր տալիս այդ հիմնարկութիւններին, պարզ երևում է այն բանից, որ՝ համարեա ոչ մի քաղաք չէր կարող առանց նոցա եօլա գնալ: Աւելի բաղմամարդ քաղաքներ, որպէս Աթէնքը, ունէին մի քանի այդպիսի հիմնարկութիւններ: Հռովմայեցոց յայտնի ճարտարապետ Վիտրուվիոսի մեզ հասած նկարագրութեան շնորհիւ՝ յունական դիմնադիւանները պատկերանում են մեր առաջ հետեւեալ տեսքով. — «դիմնադիւանի շէնքի շուրջը լինում էր մեծ բակ, որի շրջապատը հասնում էր երկու ստադիայի (1200 ոտ.) և որը ամեն կողմից շրջապատում էր շէնքը սիւնաշարքով, իսկ հարաւից լինում էր մինչև անգամ երկու շարք սիւններ: Շինութեան ներսը, աւելի դէպի հարաւ, գտնւում էր եփեքէյ կոչուած դահլիճը, որտեղ վարժւում էին երիտասարդները. սորա արևելեան և արևմտեան կողմերում գտնւում էին այլ սենեակներ, ուր օժում էին մարմինը իւղով, կամ շաղ տալիս վերաներն աւազ և այլն: Ապա՝ դէպ հիւսիս, նոյն ուղղութեամբ, ընկած էր քաղանիքների շարքը, Ապա՝ դարձեալ դէպ հիւսիս, կար մեծ, ազատ տարածութիւն, որ կոչւում էր սֆերիստերիօն և նշանակուած էր ամեն տեսակ վարժութիւնների և խաղերի համար (գլխաւորապէս — գնդակ — sphaera, — որից և ստացել է սֆերիստերիօն անունը). սֆերիստերիօնը շրջափակւում էր պերիսթիլ-ով (բակ), Շինութեան այդ մասում, ամբողջ երկայնութեամբ, գնում էր սիւնաշարքը, որ շարունակւում էր արևելեան և արևմտեան կողմերն էլ: Սորա կազմում էին դրսի պորտիկները *), ուր ձեմում էր հասարակութիւնը: Այստեղ էին գտնւում և եկեղեցիները, — տեղ, որ նշանակուած էր փիլիսոփաների, հռետորների, բանաստեղծների, արուեստագէտների և այլ ազատ պարապմունքների տէր անձանց համար, որոնք այստեղ էին գալիս զրուցատրութեան՝ իրենց աշակերտների հետ, կարգալու իրենց երկերը, ատենախօսելու, և այլն: Այսպիսով՝ այն

*) Սիւնաշարք և թերոսծածկ ձեմելիք: Մ. Թ.

խիտ և անըակտելի կապը, որ պէտք է գոյութիւն ունենար հոգոյ և մարմնոյ մէջ, արտայայտութիւն ստացաւ, ձևակերպուեցաւ և գիմնադրայի կազմակերպութեան մէջ, որտեղ ֆիզիքական կըթութեան շահերին տրուած էր նոյնպիսի տեղ, որպիսին տրուած էր մտաւոր—բարոյական զարգացման շահերին: Վերջապէս, ամենաառաջամասը կազմում էր այդպէս անուանուած պալեստրան, —մի շէնք, որը՝ թէև յաճախ անմիջապէս կից էր լինում գիմնադրայի շէնքին և կապուած նորա հետ, սակայն միանգամայն անկախ: Պալեստրայի՝ գիմնադրաներից ունեցած տարբերութիւնն այն էր, որ գիմնադրաներում մարմնամարզական վարժութիւններ կատարում էին ամեն հասակի յոյներ, իսկ պալեստրաներում՝ միմիայն երեխաներն էին սովորում նոյն բանը. այստեղ էին պատրաստուում և ըմբիշները: Գիմնադրաներում կատարուող մարմնամարզական խաղերը հետևեալներն էին.—1) Սթաւրա վազել (*δρόμος, στάδιον*). սա ունէր մի քանի կերպ. ա) հասարակ վազ (*δρόμος*)—մի անգամ անցնել *ստադիա*-ն (ասպարէզը). բ) երկուսակ (*δίαισλος*)—անցնել ստադիան և վերադառնալ. և գ) շարունակաբար (*δόλιχος*)—ուր պահանջում էր անցնել ստադիան և վերադառնալ՝ շարունակաբար՝ ո՛չ պակաս քան վեց անգամ, և երբեմն էլ 10-ն, և մինչև իսկ 12 անգամ. այսինքն մինչև $1\frac{1}{2}$ մղոն: Մի ստադիան մի գլուխ անցնելը հաշուելով 3 բոպէ, վերջին դէպքում կլինի 1 ժ. 12 բոպէ: Ուրեմն զարմանալի չէ, որ ինչպէս պատմում են, սպարապի Լադասը յաղթութեամբ վերջացնելով *δόλιχος*-ը, ընկաւ գետին ու մեռաւ: Բայց այդպիսի երկարատե ու չափազանց լարումն պահանջող մրցութիւնները—ինչպէս վաղելով՝ նոյնպէս և այլ մարմնամարզական խաղերով,—թոյլ էին տալիս ո՛չ թէ գիմնադրաներում, այլ միայն հասարակական խաղերի ժամանակ, և այն էլ՝ միմիայն կատարեալ հասակաւորներին. իսկ գիմնադրաներում, նոյն իսկ հասակաւորներին էլ, թոյլ էին տալիս միայն հասարակ վազը —մի ստադիան մի գլուխ անցնելը: Ինչ վերաբերում է փոքր տղաներին, նրանք հասարակական խաղերին էլ կարող էին մասնակցել—մրցութեան մտնել. միայն՝ թոյլ էին տալիս $1\frac{1}{2}$, կամ առաւելը՝ $2\frac{2}{3}$ ստադիա վազել: Իսկ աղջկերանց վաղելու ասպարէզը երբէք չէր կարող անցնել $1\frac{1}{2}$ ստադիայից: Վերջերում սովորութիւն մտաւ վաղել զինուած—սաղաւարտ դրած, սունապան հագած և վահանը ձեռին (վերջինս շատ լուշ), սակայն այդ սովորութիւնը երկար չտևեց:

2) Յասկել (*ἄλμα*). Ցատկում էին ուռանց ծանրոցի, կամ ծանրոցներով—խրաքանչիւր ձեռին մի հատ առած, և ցատկում

էին վեր, վար, հեռու, սիւնի կամ ձգուած թռիկի վերայով, — երբեմն լինում էր և երկրորդ թռիկ անցնում թռչում էին շքր-
ջանակի միջով: Գիմնազիաներում սովորաբար ցատկում էին
առանց ծանրաբեռնուելու ծանրոցներով: Ցատկելիս քաւ առ-
ցելը (հեռուից վազելով ուժ առնել) երբեմն թոյլ էր տրուում,
երբեմն ոչ, նայած տեղին դէպքին: — Եթէ պէտք էր որևէ բարձ-
րութիւնից վար ցատկել, թաւ առնելն արգելւում էր, այլ ճօճում
էին միայն ծանրոցները, որոնք ցատկելու միջոցին արագութեամբ
յետ էին շարժուում, և այդպիսով մարմինը փոքր ինչ քալի
(полетъ) ստանալով՝ արագ և թեթևութեամբ մղւում էր դէպ
առաջ: Թաւ առնելու դէպքում տեղը որոշւում էր որևէ չա-
փով, կամ թէ չէ՝ այդ բանի համար գործադրում էին տախ-
տակ, իսկ նպատակը որոշւում էր կամ ափսոսով, կամ չափում
էին մրցողների թռիչքի երկայնութիւնը: Մրցողներից ոմանց
թռիչքը հասնում էր մինչև 50 յունական ոտնաչափի (15 մետր),
իսկ կրօտօնացի Փայլը, որպէս պատմում է Սվիդան, ցատկեց
55 ոտնաչափի (յունական): Էին-Յունական ծանրոցները (միլ) շի-
նում էին քարից կամ արծճից և գլանաձև կամ կիսաձուլաձև ու
կոթով, կային և այլ տեսակներ:

3) Շրջանակ ցետել (дискъ) — δισκοβολία. Շրջանակները լի-
նում էին մետաղից (սկզբում երկաթից ձուլած, յետոյ բրոն-
զեայ), քարից և փայտից. ունէին ոսպի ձև, երբեմն էլ մէջ-
տեղը ծակ, լաւ յղկած, պատահում էր և զարդարուած. նոցա
ծանրութիւնը զանազան էր լինում, բայց հասակաւորների հա-
մար լինում էր սովորաբար՝ մօտաւորապէս 4 ֆունտ: Խաղն այն
էր, որ աշխատում էին նետել շրջանակը առաջուց որոշուած
հեռաւորութեամբ, կամ որքան կարելի է՝ հեռու: Մրցողները
կանգնում էին քիչ բարձրագլի տեղ, մարմնի վերին մասը փոքր
ինչ ծռած՝ թեքում դէպ առաջ. ձախ ձեռքը յենած աջ ծնկան
վերայ և շրջանակն առնելով աջ ձեռքն ու բրքան կարելի է բարձ-
րացնելով այն վեր՝ դէպի յետ, թաւ տալու համար անում մի
քանի կիսաշրջան շարժում, և նետելով շրջանակն՝ արագու-
թեամբ յետ էին թռչում և ուղիղ կանգնում:

4) Տեգ առձակել (άκοντισμός կամ ποντή), որ աշխատում էին
արուեստի բոլոր կանոնների համաձայն հասցնել տէգը որոշուած
նպատակին. տէգ արձակողն իւր մարմնի բոլոր ծանրութեամբ
յենում էր աջ ոտքի վերայ, սրն աջ ուսի հետ փոքր ինչ յետ
էր բռնում. ձախ ոտքը քիչ առաջ դնում, իսկ ձախ թևը թե-
թևակի ծալած արմունկից՝ կախում էր ազատ. տէգը վերցնում

էր աջ ձեռքով ուղիղ մէջտեղից բռնած և բարձրացնում մինչև ականջը: Տէգը փայտից էր լինում՝ երկաթեայ ծայրով, բայց գիմնապիւններում գործադրածը, կարծեմ, երկաթեայ ծայր չունէր:

Թարգմ. Մարկոս Բահ. Տէր-Մկրտչեանց.

(Կը շարունակուի)



ՄԱՏԵՆԱԽՅՍՈՒԹԻՒՆ

Александръ Анискинъ. Исторія армянской церкви (до XIX вѣка). Кішиневъ 1900, стр. XI+306+VI, 8^о, цѣна 2 руб.

Իւրաքանչիւր պատմական երկ քննելիս հարկաւոր է ամենից առաջ ուշադրութեան առնել փաստերի վաւերական լինելը և ճշտութիւնը և ուսումնասիրութեան եղանակը՝ մեթոդը: XIX-րդ դարի գիտական և քննական ոգին պատմական հետազօտութիւնների մէջ նրանով արտայայտուեց, որ սկսեցին հին աւանդական պատմագրական հում նիւթը՝ պատմական աղբիւրները՝ մանրակրկիտ կերպով քննել՝ աշխատելով դաւել ուղիղը սխալից, զրոյցը և առասպելը պատմական իրողութիւնից և հին պատմագիրների ազէտ, կողմնապահ կամ միտումաւոր դատողութիւնները անաչառ, առարկայական (objektiv, объективный) վերաբերմունքից դէպի պատմական անցքերը: Այսպիսով նաև նորագոյն հայադէտ մասնագէտները՝ նոյն քննական ոգուն և ուղղութեանը ենթարկուելով՝ իրանց բազմաթիւ ուսումնասիրութիւններով աշխատել են և աշխատում են դաւել մաքրել և ճշտել հայոց անցեալի աւանդական առատ նիւթը, որպէս զի հետ-